

Ձայս լսելուն պէս մեկէն դուրս կը ցատքէ անկողնէն , շուտով կը հագնի զգետը , անէն դուրս գէտ 'ի պանդոկը կը սկսի երթալ : Ճամբան խելքը վրան գալով կը սկսի մեղադրել իր ծիծաղելի գործքը որ երազին ականջ գնելով էլէր կ'երթայ . ուստի կը դառնայ նորէն անկողին կը մտնէ . բայց հազիւ թէ կը գոցէ աչքը , գարձեալ բարեկամը կ'երևայ իրեն արիւնշուայ բոլորովին վերաւորուած և կ'ըսէ այս խօսքերը . “ Ո՛վ ապերախտ բարեկամ , այս պիտի բռնաւորի մը ձեռքը զիս անխնայ կը թողու , որ ասանկ զիս բզիկ բզիկ ըրած , մարմինս աղբերու մէջ խառնած , քաղքէն դուրս կը տանի զիս նետելու . արդ կ'աղաչեմ , թէ որ շուղեցիր զիս թշնամուցն ձեռքէն ազատել , գոնեա հիմա մի դանդաղոր իմ մահուանս վրէժը անգուժ եղեանաւորէն հանելու , որ հիմա քաղքին դրանք քով կը համարի , : Այս սարսափելի տեսիլքէն վեր ցատքէլով բարեկամը՝ չգիտեր ընելքը , կը բանայ գուռը ու կը վազէ թշնամուցն տակէն , և ինչ որ լսեց երազին մէջ՝ զնոյնը աչք կը տեսնէ իրօք եղած ու կը բռնէ պանդոկապետը և կը մասնէ արդարութեան ատեանը : Այսպիսի զարհուրելի , բայց միանգամայն անտեղի երազ մը յայտնի չին . ծու առասպել է :

Ուրիշ մատենագիր մ'ալ կը պատմէ ծառայի մը վրայ , որ գիշեր մը քունին մէջ սկսեր է յանկարծ լալ ու հառաչել այնպէս սաստիկ՝ որ տանը մէջին ներք բոլոր իրար կ'անցնին : Տէրը շփոթած կ'երթայ կ'արթնոյնէ ու պատճառը կը հարցնէ . “ Իրաւունք ունիմ , տէր իմ , կ'ըսէ ծառան լալով . վասն զի երազիս մէջ տեսայ որ մօրս մարմինը առջևէս անցնելով գերեզման կը տանէին , : կը նշանակեն օրն ու ժամը քննելու համար՝ թէ արդեօք ճշմարտութիւն մը ունի ծառային երազը . և վերջը կը ստուգեն որ իրօք այնպէս եղեր է :

Այս յայտնի է թէ բնական սերը ազգականաց , կամ որ և իցէ բանի մը վրայ , երազատեսութեան պատճառ կը լայն . և հազարին մէկ կը պատահի թերևս որ երազը քիչ մը կը յարմարի եղածին : Բայց այսպէս ճիշդ եղածին կամ ըլլալէքին նման երոզ որ կը պատմուի՝ այս առաջ կու գայ մարդկային բնութենէն , որ կ'ախորժի ամենուն զարմանքն իր վրայ ձգելու , կարգէ դուրս մարդ մը ինքզինքը կարծեցընել տալով : Մանաւանդ տգէտ և փառասեր մարդիկ պզտիկ բանը մեծցընել և սուտ դիպուածներ պատմել խիստ կ'ախորժին . անոր համար իրենց գլխէն անցած շատ հրաշալի դիպուածներ , երազներ , և գործքեր կը պատմեն , որոնց մէջ երբեմն հազիւ թէ պզտիկ մէկ ճշմարտութեան մասն մը կը գտնուի , և շատ անգամ բոլորովին սուտ են : Ահա այս և ասոնց նման երազներն ալ յայտնի է որ այսպիսի մարդկանց հնարած , յարմարեցած գիւտեր են : Ասոր մէկ հաւաստի նշանն ալ այն է՝ որ այսպիսի կարգէ դուրս դիպուածներ միշտ կը պատահին շատախօս , ստասաց և բան ծախելու զող մարդկանց : — Երազոյ վրայօք ուրիշ քանի մը տեղեկութիւններ տես 'ի հաս . Դ . էջ 83 :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԿ

Ա՛րաւ- Դաբար :

Մէկ անիրաւ գատաւորի մը առջև իրաւունքէն է զօրաւոր մեծ սրարգև :

Աղքատիկ մ'երկար հարուստէն նեղուած , կ'ուղէր դատ վարել . իրաւունքն էր բաց . կը գիմէ շիտակ յատեան գատողին , կ'աղաչէ լսել իրաւանց ձայնին .
 “ Ա՛հ , Տէր իմ , կ'ըսէ , Աստուծոյ համար Գըթա աղքատիս , դատոս ըրէ արդար , :
 Ձեռքն ըզգեստին սակ կար շէջ մ'աղնիւ ձէթ , Որ իւր հայցուածքին անով լսէ գէթ .
 Վասն զի գիտէր խեղճուկն այն աղքատ , Որ առանց անոր յաջող չէլէր դատ :
 Այս յուսով հանեց իր ծածկած ընծան “
 “ Ընկալ , կ'ըսէ , Տէր , թէ և ոչինչ բան , :
 Իշխանը կ'առնու “ Բարեկամ , կ'ըսէ ,
 Քու բանդ յաջող է , սիրող ամուր բռնէ .
 Գիտնաս որ այսօր խընդիրբըդ կ'ըլլայ , :
 Խեղճը սիրտ առած գրունէն դուրս կ'ելլայ :
 Մէյ մ'ալ կը տեսնես ուրիշ մէկ գրունէ՝
 Իր գատախաղն ալ պալատ կը մըտնէ .
 Լաւ գիրուկ խոզիկ մը ծոցը գըրկած՝
 Մեծ յուսով կ'ելլէ իշխանին գիմաց .
 “ Թէ որ դատաստանն իմ կողմնս կըտրես ,
 Այլով համեմով զայս խոզն ալ կ'ուտես , :
 “ Այդ ալ ինծի թող , կ'ըսէ գատաւորն .
 Իրաւունքն է քուկդ , ո՛վ չը գիտեր որ , :
 Վըճիւն որ հասաւ աղքատին ականջ ,
 Խեղճն ողբով վազեց իշխանին առաջ .
 “ Ա՛հ , Տէր իմ , կ'անցեց , հաւատամ լրսածիս .
 Ես գիտցած մարդդ եմ , ինչպէս մոռցար զիս , :
 “ Մարդ , ես ինչ գիտնամ , դուն երթալուդ պ' Ուժով մէկ խող մը մըտաւ ինչուան ներս ,
 Զարկաւ խեղճ շիշիդ ու կտորեց յանկարծ .
 Ես ալ խելքս անոր՝ զքեզ մոռցայ գընաց , :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հենրիկոս Դ Գաղղիոյ թագաւորը ձի մը ունի որ շատ կը սիրէր , անանկ որ բերնէն անգամ այս խօսքս ալ ելաւ թէ “ Ով որ իմ ձիուս մահուան լուրը բերէ , կը կախեմ զանիկայ , : Ատ եկաւ ձին մեռաւ : Ախոռասպետը , որ կասգոն մէկ էր , թագաւորին գէմը կ'ելլէ ու ինչըսէ . “ Բա՛ւր ով թագաւոր , քու ձիդ . . . մեղք . . . այն աղու ձին . . . հրամանքիդ մեծութեանը ձին . . . ապոս , այն փառաւոր ձին , : . . . Թագաւորը ահա մեղքեց թագաւոր մը պողոս . “ Եյ ինչ , մեռաւ ձին , : — “ Ով թագաւոր , պիտի կախուիս , ըսէ կասգոնը , վասն զի գուն քու ձիուդ մահուան լուրը տուիր , :